Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանի 23.06.2015թ. թիվ 176-Լ որոշմամբ ձևավորվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի արագ արձագանքման հանձնախումբ (այսուհետ՝ Հանձնախումբ):

Հանձնախումբը հասարակական հիմունքներով գործող մարմին է, որը՝

ա) արձանագրում է փաստաբանի մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանի լիազորությունների իրականացման խոչընդոտման դեպքերը կամ փաստաբանի նկատմամբ այլ անօրինական գործողությունները.

բ) նպաստում է փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանների լիազորությունների իրականացման խոչընդոտները վերացնելուն:

Հանձնախումբը կազմված է **համակարգողից և անդամներից**: Հանձնախմբի անդամների քանակը չի սահմանափակվում:

Հանձնախմբի համակարգողին երկու տարի ժամկետով նշանակում է Պալատի նախագահը: Հանձնախմբի անդամներին նշանակում է Հանձնախմբի համակարգողը՝ իր գործունեության ժամկետով: Հանձնախմբի աշխատանքները կազմակերպում է Հանձնախմբի համակարգողը:

Հանձնախմբի համակարգողը՝

· ապահովում է Հանձնախմբի բնականոն գործունեությունը, այդ թվում՝ կազմակերպում է Հանձնախմբի անդամի կամ անդամների այցը Դեպքի վայր, ինչպես նաև այդ կապակցությամբ համագործակցում է լրագրողների հետ.

· սահմանում է Դեպքի արձանագրման համար անհրաժեշտ ձևաթղթերը.

· Հանձնախմբի անունից հայտարարություն է տարածում Դեպքի վերաբերյալ.

· Դեպքի վերաբերյալ գրավոր տեղեկացնում է Պալատի նախագահին և Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի համակարգողին.

· Դեպքին առնչվող փաստաբանի խնդրանքով տրամադրում է համապատասխան տեղեկանք Դեպքի վերաբերյալ.

· յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև հաջորդ ամսվա 15-ը Պալատի նախագահին է ներկայացնում հաշվետվություն՝ հաշվետու ժամանակահատվածում արձանագրված Դեպքերի և իրականացված միջոցառումների մասին:

Բեռնել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի արագ արձագանքման հանձնախմբի գործունեության մասին կարգը

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանի 2019թվականի հուլիսի 02-ի № 211-Ա որոշմամբ Հանձնախմբի համակարգող է վերանշանակվել փաստաբան **Գևորգ Մկրտչյանը:**